

Ուրեմն փոխանակ սոսկ բառերով կարկատելու, աշակերտը պէտք է սովորութիւն ունենայ միշտ կենդանի նախագասութիւններ ձեռնել, միշտ մտքեր և մտքեր արտայայտել հարազատութեամբ:—

Հիմի ամիտիենք մեր թուած բոլոր նախապաշարումները.

1. Ձենք հասկանում մեր եկեղեցական ուսումն սրանների բացէ ի բաց տարբերութիւնը ուրիշ կարգի ուսումնարաններից.

2. Ռուս մանուկի համար կազմած այբբենարանը հայ մանուկին տալով, կարծում ենք, թէ դրանց երկուսի հոգեբանական նախադարգացումը մի և նոյն է եղել:


3. Ենթադրում ենք, իբրև թէ լեզու ուսուցանելը մի անբաժանելի գործ է. սակայն ջոկ բան է բովանդակութեան գաղափարների հասկացումը, և ջոկ է՝ բուն լեզուի շէնքին, բառապաշարին, սղուն, համն ու հոտին տիրանալը.

4. Խորութիւն չենք դնում գեղարուեստական և շինուի գրականութեան մէջ.

և 5. Բառեր ենք թարգմանում, և ոչ թէ մտքեր արտայայտելու սովորութիւն հաստատում:

Այս բոլոր առաժներիս վերջաբանն այն է, որ եթէ արիւթիւն ունենանք մեր ոսկրացրած նախապաշարումների դէմ անտեղիտալի պատերազմ պատերազմել, բուսերէն լեզուի դասատուութիւնը կը հասցնենք ցանկալի բարձրութեան, և հայ հոգուն էլ չենք դաւաճանի:

Ս. Մանդիկեան



Ն Ա Խ Ն Ե Ա Յ Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Ա.

Այս վերնագրի տակ մենք մտադիր մենք «Արարատ»-ի ընթերցողներին մի շարք յօդուածներ տալ այլ և այլ հնութիւնների և նրանց արժէքի մասին: Այդ յօդուածները միմեանցից անկախ կլինին, թէ նիւթի բնաւորութեամբ, թէ ժամանակով և թէ պատմական նշանակութեամբ: Բայց մի ընդհանուր վերնագրի տակ ենք դնում միայն այն պատճառով, որ նրանք մեր նախնեաց կեանքի այս կամ այն կողմն են լուսաբանում և արդիւնք են հայի քաղաքակրթական գործունէութեան: Այս անգամ ու-

սուսնասիրութեան նիւթ ենք ընտրել 1066 թուին գրուած մի աւետարան, № 369, որ եղել է սեպհականութիւն ներսէս Շնորհալու, Գրիգոր Ապիրատի և Պապեոսնի տէր Բակուրան մեծ իշխանի: Աւետարանը կարևոր նշանակութիւն ունի նաև իւր մանրանկարչական արուեստի մնացորդներով, իբրև հայ-բիւզանդական արուեստի լաւագոյն արտադրութիւններից մէկը: Բայց նախ նկարագրենք աւետարանի արտաքին յատկանիշներն ու յիշատակարանները:

Աւետարանս պատկերազարդ է և գրուած է 281 թերթից բազկացած ընտիր մագաղաթի վերայ, 23×15 սմ. մեծութեամբ, երկսիւն՝ իւրաքանչիւրը $14 \frac{1}{2} \times 10$ սմ., և 21 տող: Գիրը՝ ընտիր, բոլորաձև միջին մետրոպեան, Արկուեցի Գրիգոր քահանայի գրչութեամբ, Սեբաստիա քաղաքում, Հայոց ՇԺՆ և փրկչական 1066 թուին: Խորագրերը, աւետարանների սկզբնագրերի բացառութեամբ, որոնք զարդանկար են, պարզ գլխատառեր են, խեցոսկով գրուած, երբեմն և առաջին տողը, բայց տեղ տեղ ևս պարբերութիւնների գլխատառերը կարմիր թանաքով են: Կազմը փայտից է, կաշեպատ, հասարակ, նոր և առանց զարդի: Ձեռագիրն ընդհանրապէս լաւ է պահուած, բայց տեղ տեղ թանաքն անցել է, թէև կարելի է կարգալ:

Աւետարանն սկսւում է «յովաթամ» բառով, որով ոչ միայն Մատթէոսի առաջին ութ տունն է պակասում, այլ և որ կարևորն է խորանագարդերը, աւետարանչի պատկերն ու սկզբնագարդը: Այս կորուստն անփոխարինելի է, որովհետև շատ քիչ են ՓԱ. դարու մանրանկարչական արուեստի այսպիսի կատարելութեամբ ձեռագիրները: Մարկոսի վերջում, ՓՁ. 9 և շարունակութիւն առանձին վերնագիր ունի. «աւետարան ըստ Մարկոսի», վերջանում է 18 համարով «բժշկեցեն» բառով, մէկ թերթ ընկած լինելու պատճառով: Այդ ընկած թերթի վերայ նկարուած էր և Ղուկաս աւետարանչի պատկերը:

Ղուկաս ԻՖ. 43 և 44 բնագիրը չունի այլ յետոյ է աւելացրած լուսանցքում բոլորգրով, սակայն այդ էլ պահասաւոր, կազմելու ժամանակ լուսանցքը կտրուած լինելու պատճառով: Փակագծի մէջ առնուած տառերը կտրուած են. «եւ երևեցաւ նմհ(րեշտակ) | յերկնից՝ և զօրա(ց) ուցանէր զնա և (էր) | ի տաղնապի՝ մ(ը) | տաղիւրութք և (ս) | կայր յղթս և հոսէին ի նմանէ | քըրտունք իբրև զկա(յ) | լակս արեան՝ ո լոռ(ն) | ոլոռն հեղ ալ յերկիր» | : Կտրուած է Յովնաննու սլատկերն ու սկզբնազարդը՝ երկու թ րթ, որով բնագրից պակասում է առաջին 11 համարը. այդ թերթերը կտրուած են մկրատով և արմատները դեռ ևս նկատելի են: Յովհաննէս սկսում է. «ետ նոցա իշխանութիւն»: Յովհաննու վերջում ևս «աւետարան ըստ Յովհաննու» վերնագրով դրուած է ննացեալ կնոջ պատմութիւնը:

Սորան կցուած է 279բ, երկրորդ սիւնեակից մինչև 281ա, աւուր պատշաճից աւետարանների մի ցանկ. ա) Յայտնութեան ութ աւուրցն առաւաւտին, բ) տն ընդ առաջին առաւ. գ) քառասնորդացն պահոց կիւրակէի առաւ. դ) շաբաթուցն պատարագ. ե) զազարու առաւ. զ) արմաւենեացն առաւ., յինն ժամուն, երեկունն. է) պենդեկոստեի առաւ. ը) վարդեվար թ) լուսանցքում «խաչին»: Կարմիր թանաքով վերջում աւելացրած է. «այս են առաւաւտի զայլն յնթերցուածն տես»: Այս հատուածն ուրեմն հին տօնացոյցի մի մաս է:

Մի թերթ պահպանակ մազաղաթ, միջին երկաթագրով, երկսիւն, արտաքինը կիսով չափ կտրուած. նիւսացու երգ երգոցի մեկնութիւնից, հետաքրքրական իւր հնչիւնաբանութեամբ և ուղղագրութեամբ:

282 ա. ա. սիւնեակ. ընդոցն ի վեր կու... | ...վն այդ յամէնէցունց յայն | (ց)անէ արտաքոյ լինին ի ձմեռնաին | մրկացն խորոցն ի նաւահանգի(ս) (տ)ն հաղաղանցեալք. արդ եթէորք | (զ?) իւր անձն հաստատեսցէ այն-

պէս | որպէս զի հաղաղութ (կէս տող քերուած) | ? եան
անալէկոծ հանդարդութեա | մը. ոչինչ սասանելով ի չար |
այս | ի(?) ցն. եւ ոչ ամպարտաւանութեամբ | ի վերայ
հանչացեալ. ոչ բարկու | թեան ալեաւք փրփրեալ. եւ ոչ
այդ | ով ախտիւ ինչ կոծեալ. եւ սասաս(այսպէս) | նեալ
ամենայն հողմով ըստ զանա | զան ալէկոծութեան ախ տիցն
յա | ըուցանողաց. եթէ այնպէս ունիցի. եւ որք ի խորս
աշխարհիս | ձմեռնաին մըրկաւքն. զամէնապատիկ երեքա-
լեանչարիսն յին | քեան զնստուցանիցէ հարթից | անձին.
եւ առանց ալէկոծութ | եան ի յանձին առաքինութեան | *

282 ա. բ. սիւնեակ.... | ի բանէ... | որական.. | իր
տեսակ.. | տարելութ.. | զի թէ էր մի... | նմանեա(լ?)..
| իրաւք զով.. | ոչ զնոյն... | քինութե... | ինն իս կ?)...
| միանգամ... | զառաքին... | յոլովութ... | թեամբ. ե...
| հասարակ... | ոչ է պա... | ըեաց... | առա... | **

282 բ. ա. սիւն.... | ... | ...իցի քեզ | ...ն շուրջ |
շա եւ առ | ...րեալ ունի | ...այս է ա | ...արատ ա՞ծ |
...ուրջ զպա | ..յաղագս | ...շնորհա | ..անուր | ...ի քուծ
| ...հր դակց | ..ժար է այ | ...ն յաւ | ...սիրե | ...
եանն | †

282 բ. բ. սիւն. հաւելով որ ի յառաջագոյ.. | ուե-
ցելոցն ի մէնջ տեսութ.. | ց վարկանիցի. թերեւս զմի..
| պատշաճագոյն ունել եւ յ.. | մարս. բայց բանքս խո-
րանալով | յեղանակաբար նշանակաւք | դժուարիմանալի
առնեն ի ձե..—առակացս զյայտնութիւնն.. | արդ զի ոգ-
ւոյ գեղեցկութիւն.. | ձիոյ որ ի բաց բառնայր զե | զիպ-
տացւոցն զկառսն մանե.. | ցաւ. այս է հրեշտակական զին |

* Այստեղ ներքեկից կտրուած, բայց տողի մի փոքր մասը
երևում է. կտրուած է և վերին կողմից, որից պիտի եզրակաց-
նել, որ ձեռագիրը եղել է մեծ գիրքով, երկսիւն:

** Մնացած տողերը կտրուած.

† ներքեկի տողերը կտրուած

որութեանն (այսպէս). ձիոյն այնորիկ | ասէ քաջ հեծեալն.
 սանձք են | սրբութիւնն. որովք նշանա | կեաց նմանեցու-
 ցանելով կ(?)զ | ահսն տատրակաց. եւ զարդ շուրջ զպա-
 րանոցաւ զզանազան | մանեակս զառաքինութեամբ | փայ-
 ղեալսն. ախորժեն եւ բարեկամքն յաւելուած իմն զե |
 ղեցկութեան ձիոյն առնել.

Բ.

Յիշատակարաններ. 81բ Մատթէոսի վերջում բոլոր-
 գրով.

«Ըստ անսուտ եւ ճշմարիտ խոստմանցա քոց աստուած
 իմ յիսուս լեր ընդ մեզ յաւգնականութիւն ընդդէմ ներհակին
 եւ ամենայն հաւատացելոց քոյին մարգեղութեանդ, զի կա-
 րողքք լինիցիմք մինչև ի կատարած հանդերձելոցն յանդ հանել
 զհաւատս քրիստոնէութե և առ քեզ հասուցանել զգաւա-
 նութիւնս մեր ո՛վ երբորդութիւն սք և զքանքարն ճշմարիտ
 տալ ի ձեռս քո քս»:

82ա Միջին ուղղանկիւն երկաթագրով.

«Յիշեցէք ի քս եւ զքարեպաշտ իշխանն զմեծ սեւաս-
 տաւոն զբակուրանն, զորդի սմբատա որդւոյ հեթմոյ սե-
 ւաստոսի տեառն լամբրաւնին եւ պապեռաւնին, որում եւ
 զաւետարանս շնորհեցի. ընդ նմին եւ զքսասէր ամուսինն
 իւր զթագուհի զըստ մարմնոյ քոյր իմ, որոց սղորմեսցի տր
 քս աստ եւ ի հանդերձելումն: Ի թւ. ոխդ:

217բ Ղուկասի վերջում, տես նկար 1.

«Ես տր դրիգորիս ծառա ծառահց քսի, եղբաւրորդի
 տն ներսիսի կաթողիկոսի հայոց՝ եւ որդի զաւրավարի, ետու
 վերոսին նորո՞գել արտաքուստ կուսէ զաճային աւետա-
 րանս գեղեցիկ մետաքոէիւք եւ ահամբ պատուականաւք ընդե-
 լուզեալ ի մարգարոց մեծագնոյ ի ձեռն աճաբանական վար-
 դապետի ստեփանոսի դրան սարկաւազի տն իմում, որ և վասն
 անմոլար ճանաչելոյ՝ կոչի սա յակորցի:

Ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ նախ և առաջին հոգե-
 ւոր տն իմոյ ներսէսի կաթողիկոսի որ եւ զսոյն իսկ զաւե-
 տարանս շնորհեաց ինձ ի զբաւսանս և ի խրախճանութիւն հո-
 գեւոր, այսու զուարճանալ եւ մի պատրանաւք անցաւոր կեն-

* Մինչև այստեղ միջին երկաթագրով և նման նախընթացին,
 իսկ մնացածը բոլորգրով:

ցաղոյս՝ Արդ որք ընթեռնոյք կամ աւելիք ի սմանէ, թողու-
թիւն մեղաց խնդրեցէք ի անէ յառաջասացելոցս, զի և տուիչն
յիշողացաւ և յիշելոցս սղորմեացի, ամէն:—

281 ար. Բուն զբշի յիշատակարանը միջին երկաթա-
գրով, բաւական եղծուած, մանաւանդ երկրորդ երեսը,
որ միայն երկար չարչարուելուց յետոյ, հնարաւոր եղաւ
խոշորացոյցի օգնութեամբ վերծանել.

Ե. Ժ: Ե: Թուոյս հայոց շրջագայիս.

Ես գրիգոր քահանայ՝ ի նուագել ազգիս հայոց՝ ի ժամա-
նակի հալածանաց մերոց յազգէն իմայելի. սահեալք ի կող-
մանց արեւելից ի լեւանցն այր|արատա՛ ի գեղջէն որ կոչի ար-
կուռի՛ զկնի| անձամէր թագաւորին սերոյ սենեքերիմայ.
եկեալ ընակեցաք ի քաղաքիս սերաստիս ուր քառա|սուն
վիւրջն հեղին զարիւնս իւրեանց. մարտ ե|դեալ ընդ սւգոյ
դաւնաշունչ՝ և ընդ սառա|մանեաց ջրոյ. եւ անդէն զկնի ամաց
հնգից|ախաճանէր քաղմաշնորհ եւ մեծապատիւ հայրն|իմ անա-
նիս քահանա ի թագաւորական քաղա|քին ի բիւզանդիոն. . . .
մնաց| . . . երկու եղբարքս գէորգ եւ գրիգոր ի մանգական
տիս աշակերտացաք առ սաս երա|նելի ան փիլիպպոսի եւ
որդւոց իւրոց ստեփանոսի եւ սահալա. եւ ըստ սովորական |բա-
րեմտութեան իւրեանց եղեն անուցիչք| եւ սուցիչք մեր յոյժ
բարերար կամաւք 281բ եւ քննող եղես . . . | . . .
ցանգացա եւ ուսանել զգո|րծ ոսկւոյ ի զարդ պատուիրանաց
ան եւ ի կազ|մած նորին եւ ի վերայ այսր ամենայնի եր . . .
(բառի կէտք անթեռնելի)|զայնուսի որք տեսին զ՝տրն եւ վա-
յելե|ցին յամենասուրբ բերանոյ վարդապետու|թեան նորա եւ
զերանութիւնն զոր առ պե|տրոս վասն խոստովանելոյ զնա՛տր
եւ ան| . . . վերայ իմ եւ ամենայն հաւատացելոց . . .
. . . տենչմամբ համարելի զիս անկ|եալ առ սասն ան լսելով զե-
րանական զճայննի|բերանոյ նորա. եւ առ տենչ փափագանաց
եւ|ալիտի սրտի թախանձեցի զ՝տրն իմ սահալ բե|րել զտուփ
կաղմածոյս ի թագաւորական քա|ղաքէն եւ գրեցի զսուրբ
աւետարանս իմով| (ձեռօք ի վայելումն մանկանց) յիշատակ
ինձ փոխանակ որդեաց եւ ժառանգու|թեան եւ ետու զսա
զկնի փոթելոյ իմոյ որ|դւոյ եղբաւր իմոյ յոհաննիսի.

Արդ ազաչեմ զքեզ քս փրկիչ բարերար անձառ|բար
ի հաւրէ ծնեալ անժամանակ եւ անմարմնա|պէս. եւ անընա-
բար ի կուսէն ժամանակաւ առ . . .

Այստեղ ընդհատուում է յիշատակարանը՝ թերթ ըն-
կած լինելու պատճառով: Ընդգծուած տառերը տեսա-

նեղի չեն, այլ լրացուած են ենթագրարար: Փակագծի մէջ առնուած տողը զրուած է բոլորգրով ջնջուած երկաթագրի վերան, «մանկանց» բառը կարդացուած է երկաթագրով «ձեռք» երկաթագրում պիտի լինէր անշուշտ «ձաւք»:

Գ.

Այս յիշատակարաններից կարելի է պարզել մեր աւետարանի պատմութիւնը: Գրիգոր քահանայի յիշատակարանից տեսանք, որ աւետարանը գրուած է Հայոց ՇժԵ, իսկ փրկչական 1066 թուականին, Սերաստիա քաղաքում: Գրիչն ու նկարիչը նոյն Գրիգոր քահանան է, որ ծնուած է Մասեաց ստորոտում՝ Արհոռի գիւղում, բայց Վասպուրականի Անենքերիմ թաղաւորի 1021 թ. Սերաստիա գաղթելուց յետոյ՝ իւր հօր՝ Անանիա քահանայի հետ ինքն էլ փոխադրուել է այնտեղ: Նա աշակերտել է Տէր Փիլիպոսին և նորա որդոց Ստեփանոսին և Սահակին, որոնց մօտ և ուսել է, հաւանօրէն, զրեւու և նկարիչու արուեստը: Ինչ աստիճան և պատիւ ունէր Սահակը, որը մի տեսակ խնամակալ է հանդիսանում աւետարանիս գրող և նկարող Գրիգոր քահանայի, դժուար է որոշել. յամենայն դէպս Սահակը սոսկ քահանայ չէ, ապա թէ ոչ անհասկանալի կլինէր 50 տարեկանի մօտ Գրիգոր քահանային նրան «տէրն իմ Սահակ» անուա—: նելը: Սորա ձեռքով բերել է տուել զրիչը կ. Պօլսից և աւետարանի կազմի տուփը:

Գրութեան թուականից հարիւր տարի յետոյ, աւետարանը անցել էր Ներսէս Ծնորհալու ձեռքը, որ նուիրում է իւր եղբորորդի Գրիգոր Ապիրատին: Վերջինս աւետարանն ստանալիս եպիսկոպոս պէտք է լինէր համար որի ցուցումն կարող է լինել նորա յիշատակարանի «տէր Գրիգորիս ծառա ծառայից» կոչումը. յայտնի է, որ Ծնորհալու մահուան ժամանակ նորան յաջորդ էր նկատուած ոմանց կողմից Գրիգոր Ապիրատ, և միայն Ծնորհալու նախօրօք յայտնած ցանկութեան համեմատ և այլազգի իշ-

խանի հովանաւորութեամբ Գրիգոր Տղան յաջորդից: Ծնոր-
հալու ընծայաբերութեան թուականը նշանակուած է,
բայց պէտք է 1166—1173 թուերի մէջ լինէր: քանի որ
կաթուղիկոս էր: Իսկ ո՞վ է յիշատակարանի մէջ յիշուած
կաթուղիկոսարանի դրան սարկաւազ Ստեփանոսը: որի
ձեռքով մեր աւետարանը «արաաքուստ կուսէ» Գրիգոր
Ապիրատը զարդարել տուեց «գեղեցիկ մետաքսէիւք եւ
ակամք պատուականաւք ընդելուզեալ ի մարգարտոյ մե-
ծագնոյ»: Ամ. նայն հաւանականութեամբ ոչ այլ ոք, բայց
եթէ ներսէս Ծնորհալու կողմից՝ իւր կեանքի վերջին օրե-
րին: միութեան խնդրի առթիւ դէպի արևելք ուղարկած
Ստեփանոս վարդապետը:՝ Այս յիշատակարանը իւր
տուած տեղեկութիւններից զատ, մեզ համար նուիրա-
կան է Գրիգոր Ապիրատի ինքնաձեռագիր յիշատակարանով
(նկար 1):

Գրիգոր Ապիրատի ինքնաձեռագիր յիշատակարանը
պարզում է և ուրիշ խնդիրներ. համեմատութիւնը ցոյց
է տալիս, որ 81ա յիշատակարանն էլ գրուած է Գրիգոր
Ապիրատի կողմից և բովանդակութեամբ էլ շատ յարմար
է ժամանակին: ներսէս Ծնորհալու օրով սկսուած էր
հայոց և Յունաց միութեան խնդիրը, որ աւելի ծաւալ
ստացաւ Գրիգոր Տղայի ժամանակ: Այս կարևոր խնդիրը
պէտք է յուզէր ժամանակակիցն՝ ըրի մտքերը, յատկա-
պէս եկեղեցու պաշտօնեաների, որոց դասին էր պատկա-
նում և Գրիգոր-Ապիրատ: Այս յիշատակարանը պէտք է
գրուած լինի 1194 թուից առաջ, որովհետև Պապեոսնի
Բակուրան իշխանի սեպհականութիւնն էր այն այդ թուին:

82ա Յիշատակարանն ևս, որից առնում ենք նա-
խընթաց տեղեկութիւնը Գրիգոր-Ապիրատինը պիտի լինի,
որովհետև նման է վերջնիս բուն յիշատակարանի (նկար 1)
երկաթազրով մասին: Բակուրանը, որին ընծայում է յիշա-
տակարան գրողը, Հեթմեան ցեղի՝ նշանաւոր ներկայացու-
ցիչներից մէկն է: Օշին Ա.-ի որդին Հեթում Լամբրոնը
ժառանգութիւն է տալիս իւր աւագ որդի Աւշին Բ.-ին՝
ներսէս Լամբրոնացու հօրը, իսկ Պապեոսնը միւս որդուն՝

Սմբատին. այսպիսով Հեթմեանց ցեղը երկու ճիւղի է բաժանուում: Սմբատի մահուանից յետոյ՝ որ ընկա պատերազմի դաշտում Մսիս քաղաքի դռների առաջ, իւր եղբոր հետ Թորոսի դէմ պատերազմելիս, Պապեռոնը ժառանգեց նորա որդի Բակուրանը: * Սորա քոյրն էր Ռիթան՝ Ստեփանէի կինը, որ ամուսնու մահից յետոյ՝ իւր երկու որդուց՝ Ռուբէն Բ-ին և Լևոնին (Թազաւոր) եղբոր մօտ տարաւ և այնտեղ դաստիարակեց: Սմբատ պաամիչ Բակուրանին անուանում է «այր բարի և առատ, և սիրելի Աստուծոյ և մարդոյ»: Այս բարութեան մի ապացոյցն էր իւր հօր և առհասարակ Հեթումեանների թըշնամի Ռուբինեանց երկու զաւակների խնամատարութիւնը: Ռուբինեանց պատմութեան վերաբերեալ յիշատակարաններն էլ յիշում են Բակուրանի այս մեծահոգութիւնը. «Այլ Ստեփանէի մնացեալ էին բ. որդիք, Ռուբէն և Լևո՛, որք սնեալ կային առ քեռին իւրեանց Բակուրան տէլ, Պապեռօնին, և յորժամ սպանաւ Մլեհն, իշխանքն և զօրքն Հայոց, յղեցեալ բերին անտի զՌուբէն որդի՞ Ստեփանէի և կացուցին պարոն »: * Լևոն Գ-ի (Իսկապէս Հեթում Բ-ի արքայական ճաշոցի յիշատակարանը նոյնն է պատմում, միայն երկու իշխանազունների սննդեան տեղը Տարսոնը նշանակելով: **

Բակուրանի հայրական խնամատարութիւնը շարունակում է և Ռուբենի իշխանութեան ժամանակ, երբ վերջինս գերի էր ընկել Անտիոքում: Բակուրան պատանդ է ուղարկում Ռիթային ուրիշ ազգականների հետ, մինչև որ Ռուբէն կիլիկիա է գալիս և փրկանք տալով՝ ազատում նրանց: Բակուրանի բարձր գիրքը և ազդեցութիւնը շարունակում է և Լևոնի ժամանակ. նա մէկն էր այն դեսպանութեան անդամներից, որ Լևոն ներսէս Լամբրո-

* Պատմութիւն ազդին Ռուբինեանց, թէ որպէս տիրեցին կիլիկիոյ, Սամուէլ Անեցի, հրատ. Արշակ Տ. Միքելեանի, յաւելուածք եր. 204.

** Չեռ. № 892. եր. 472 բ: Սամուէլ Անեցի եր. 212.

նացու առաջնորդութեամբ ու զարկեց Ռիւզանդինն, ստացած թագի փոխարէն սիրոյ դաշինք հաստատելու: Բահուրան կենդանի էր դեռ 119 թուին, Լեւոնի օժիւն տարին:

Բուկարանի եղբայրն էր Վասակ՝ Ասկուռոսի և Լամոսի տէրը՝ որ դարձեալ պղծեցիկ էր Լեոն Բ-ի պալատում, իսկ Վասակի որդին էր Կոստանդին՝ Հեթում Ա-ի հայրը:

Յիշատակարանը մեր առաջ մի այլ խնդիր է դնում. Բահուրանի կինն է Թագուհին, որ յիշատակարանը գրողի և Բահուրանին ընծայողի քոյրն է: Իսկ մենք ակնարկեցինք այս և դրիզոր Ապիրատ՝ յիշատակար նի գրութիւնների նմանութիւնը: Մենք տեսանք, որ այս աւետարանը Գրիգոր Ապիրատ նուէր էր ստացել Ծնորհալուց և զարգարել «դեղեցիկ սետաքսէիւք եւ ակամք պատուականաւք ընդելուզեալ ի մարգարտոյ», այսպիսի մի աւետարան Գրիգոր Ապիրատի կենդանութեան ժամանակ շուտով ձեռք է ձեռք անցնել չէր կարող, եթէ նա ինքը նուէր չտար. իսկ եթէ յիշատակարանի հեղինակը և աւետարանի նուիրաբերողը Գրիգոր Ապիրատն է, նշանակում է նա երկու քոյր ունէր, որոնցից մէկը՝ Ծահանգուխտ՝ ներսէս Լամբրոսնացու մայրն էր, իսկ միւսը՝ Թագուհին Լամբրոսնացու հօրեղբոր որդու՝ Բահուրանի: Այս մի պատմական նորութիւն է և Պահլաւունեաց ցեղազրութեան մէջ մի անձի յաւելում, որ հիմնուած է միայն այս յիշատակարանի վերայ:


Այստեղ իսկապէս վերջանում է մեր աւետարանի և նրան յարակից անձանց պատմութիւնը. բայց մի թէական խնդիր ևս կայ, որ առանց յիշատակութեան թողնել չենք կամենում: Մմբատ Պատմիչ նկարագրում է որպէս ականաատ, թէ ինչպէս Յովհաննէս է. Մեծաբարոյ կաթողիկոսը իւր նախորդ Պահլաւունիների շինած սրբութիւնների ոսկին հալում, քարերն ու մարգարիտները քանդում է և Հռոմկլան ամբացնելու վերայ ծախսում: Ի սիջի այլոց «քակեաց զոսկիակազմ տուփ աւետարանին

տէր Գրիգորիսի, որ էր ահամբ և մարգարտով: * Աւետարանի զարդերի նկարագրութիւնն ու Գրիգորիս անունը շատ յարմար են գալիս մեր աւետարանին, բայց Սմբատի խօսքերն այնպէս անորոշ են, որ զժուար է հասկանալ, որ Գրիգորիսին է ակնարկում: Պատմիչն այս ձատուածում և ուրիշ տեղ անխտիր գործ է անում Գրիգորի Գրիգորիս անունները մի և նոյն անձի համար: Թէպէտ Ապիրատ բառն ևս գործ է անում երկու անգամ Գրիգոր Զ-ի մասին, բայց մի անգամ ևս Գրիգորիս և Գրիգոր առանց աշխարհական անուան: Սմբատի յիշած «տէր Գրիգորիսը» այստեղ Ապիրատի հետ նոյնացնելու դէպքում, պէտք է ընդունել, որ Բակուբանի մահուանից յետոյ՝ աւետարանն անցել էր իւր նախկին տիրոջը, իսկ ապա մնացել կաթողիկոսարանում:

Ե՛րբ է այս աւետարանը էջմիածին բերուել և ի՞նչպէս, տեղեկութիւն չունինք:

Շարունակելի

Գաւեգիւն վ. Յովսէփեան



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա.

Հրատարակութիւն Ա. էջմիածնի.

Պատկազիբ Հայոց. հ ստր Ա. գիբ երկուրդ,

Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.ՈՍ

Աշխատութեամբ Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Կանայեանց, ծախիւք Տեառն Սուրբասայ Արքեպիսկոպոսի Պարզեանց. Տիգրիս, 1909 թ. գինն է 3 սուր.

Ազատագրութիւն այս վերջին հրատարակութիւնը մի հոյակապ գործ է, որ պատիւ է բերում աշխատողներին և հրատարակողին: Գրքի մէջ կան բացի առաջին 4 երես վերտառութիւններէց,

* Սմբատ Պատմիչ 104—105.